Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-140[1]-08.11.2012-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2007 թվականի փետրվարի 21-ի Դատական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) 37-րդ հոդվածի 1-ին մասում «16» թիվը փոխարինել «26» թվով:

Հոդված 2. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 75.1-րդ հոդվածով.

«**Հոդված 75.1. Դատավորի պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակային ապահովությունը**

1. Որպես դատավոր առնվազն 10 տարի պաշտոնավարած անձին, ում լիազորությունները դադարեցվել են սույն օրենսգրքի 167-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 5-րդ կետերով, ինչպես նաև 4-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հիմքերով, նշանակվում է կենսաթոշակ՝ վերջին 1 տարվա ընթացքում որպես դատավոր զբաղեցրած պաշտոնի համար ստացած միջին աշխատավարձի ընդհանուր գումարի և զրո ամբողջ ինը տասնորդական գործակցի արտադրյալի 55 տոկոսի չափով:
2. Դատավորի պաշտոն զբաղեցրած անձին նշանակված կենսաթոշակի չափը չի կարող գերազանցել որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված պաշտոնային դրույքաչափի 92 տոկոսը:
3. Կենսաթոշակի չափը վերահաշվարկվում է որպես դատավոր զբաղեցրած վերջին պաշտոնի համար Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 75-րդ հոդվածով սահմանված դատավորի պաշտոնային դրույքաչափը բարձրացվելու դեպքում՝ պաշտոնային դրույքաչափի բարձրացմանը համամասնորեն:
4. Դատավորի պաշտոն զբաղեցրած անձի միջին աշխատավարձը և ստաժը հաշվարկելու, կենսաթոշակը նշանակելու (վերահաշվարկելու),վճարելու կարգը, ինչպես նաև կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 3. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ին:
2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դատավորի պաշտոն զբաղեցրած անձին նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի փոխարեն նշանակվում է Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կենսաթոշակ:

3. Եթե Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված կենսաթոշակի չափը ցածր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի հանրագումարի չափից, ապա Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կարգով նշանակված կենսաթոշակը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի հանրագումարի չափով:
4. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում վճռաբեկ դատարանի նախագահը հրապարակում է հայտարարություն՝ դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով արտահերթ որակավորման ստուգումներ անցկացնելու մասին:
5. Դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժինը համալրելու նպատակով արտահերթ որակավորման ստուգումներն անց են կացվում դատավորների թեկնածությունների ցուցակի կազմման և հաստատման համար Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքով սահմանված կարգով՝ սույն հոդվածով նախատեսված ժամկետներին համապատասխան:
6. Վճռաբեկ դատարանի նախագահի կողմից արտահերթ որակավորման ստուգումներ անցկացնելու մասին հայտարարությունը հրապարակելուց հետո Դատական դպրոցի կառավարման խորհուրդը ոչ ուշ, քան քսանօրյա ժամկետում սահմանում և հրապարակում է ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունները:
7. Հայտերը ներկայացվում են Դատական դպրոցի տնօրենին՝ Դատական դպրոցի կառավարման խորհրդի կողմից ՀՀ դատական օրենսգրքի 115-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված տեղեկությունները հրապարակելու օրվան հաջորդող օրվանից հետո մեկամսյա ժամկետում:
8. Հայտեր ներկայացնելու վերջնաժամկետից հետո մեկշաբաթյա ժամկետում կազմակերպվում է որակավորման ստուգման անցկացումը: Որակավորման ստուգումը և արդյունքների ամփոփումը, այդ թվում՝ որակավորման արդյունքների բողոքարկումը, իրականացվում են տասնհինգօրյա ժամկետում:
9. ՀՀ դատական օրենսգրքի 116-րդ հոդվածով նախատեսված գործողությունները Դատական դպրոցի կառավարման խորհուրդն իրականացնում է բողոքարկման ժամկետի ավարտից հետո՝ ոչ ուշ, քան հնգօրյա ժամկետում:
10. Դատական դպրոցի կառավարման խորհրդի կողմից թեկնածությունների ցուցակը Արդարադատության խորհուրդ ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից ոչ շուտ, քան 14, բայց ոչ ուշ, քան 20-օր հետո, Արդարադատության խորհուրդը, ՀՀ դատական օրենսգրքի 117-րդ հոդվածով նախատեսված կարգով, իր նիստում ուսումնասիրում է առաջարկված թեկնածությունները և հրավիրում նրանց զրույցի:
11. Դատավորների թեկնածությունների ցուցակը Հանրապետության Նախագահին է ներկայացվում Դատական դպրոցի կառավարման խորհրդի կողմից թեկնածությունների ցուցակը Արդարադատության խորհուրդ ներկայացնելու օրվան հաջորդող օրվանից մեկամսյա ժամկետում:

12. Հանրապետության Նախագահը ոչ ուշ, քան Արդարադատության խորհորդի կողմից ցուցակը ստանալու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում հրամանագրով հաստատում է Արդարադատության խորհրդի կազմած ցանկը՝ իր համար ընդունելի թեկնածություններով:
13. Սույն հոդվածին համապատասխան դատավորների թեկնածությունների ցուցակի վարչական մասնագիտացմամբ բաժնում ընդգրկված ունկնդիրների ուսուցումը Դատական դպրոցում սկսվում է որակավորման ստուգման արդյունքների ամփոփումից հետո՝ 15-օրյա ժամկետում: Ուսուցման տևողությունը չի կարող պակաս կամ ավելի լինել ՀՀ դատական օրենսգրքի 187-րդ հոդվածով նախատեսված ուսուցման համար սահմանված տևողության ժամկետից:

Ա Մ Փ Ո Փ Ա Թ Ե Ր Թ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔՆ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություններ
1	2	3	4
ՀՀ կառավարություն	Արդարադատություն իրականացնող դատավորների կենսաթոշակի հետ կապված նախատեսել այնպիսի կանոնակարգումներ, ինչպիսիք նախատեսված են սահմանադրական դատարանի անդամների համար: Միաժամանակ՝ նախատեսել անցումային դրույթներ, որոնցով կկարգավորվի նաև սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից սեղմ ժամկետում որակավորման ստուգումներ անցկացնելու և դրա արդյունքում ընտրված թեկնածուների համար համապատասխան դասընթացներ կազմակերպելու հարցը:	Ընդունվել է	Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	2013 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ է մտնում «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքը: Ըստ այդմ, ընդհանուր իրավասության դատարանի դատավորի դրույքաչափը նախատեսվում է սահմանել 478405 դրամ (440000-ի փոխարեն): Դրույքաչափը բարձրացնելով պայմանավորված կենսաթոշակների չափերի մեխանիկական աճ թույլ չտալու նպատակով, առաջարկվում է. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի		
	1) 2-րդ հոդվածի 2-րդ մասում «100» թիվը փոխարինել «92» թվով,	1) Ընդունվել է.	1) Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:
	2) 2-րդ հոդվածի 4-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.	2) Ընդունվել է.	2) Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:

	«Միջին աշխատավարձը հաշվարկելու, կենսաթոշակի չափը հաշվարկելու, նշանակելու, վճարելու, կենսաթոշակի չափը վերահաշվարկելու, ստաժը հաշվարկելու կարգը, ինչպես նաև կենսաթոշակ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Միջին աշխատավարձը հաշվարկելիս՝ դատավորի աշխատավարձից հաշվարկված հարկերը հաշվի չեն առնվում:»,		
	3) 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունվարի 1-ին: Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո, «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով դատավորին նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի փոխարեն նշանակվում է Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կենսաթոշակ: Եթե Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված (նշանակված) կենսաթոշակի չափը ցածր է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը նշանակված՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի հանրագումարի չափից, ապա Օրենսգրքի 75.1-րդ հոդվածով սահմանված կարգով հաշվարկված (նշանակված) կենսաթոշակը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակված կենսաթոշակի և դրա նկատմամբ սահմանված ամենամսյա հավելավճարի հանրագումարի չափով:»:	3) Ընդունվել է.	3) Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ: